

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/7

14 օգոստոսի 2020թ.

ք. Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Է. Խաչատրյան (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծող՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր սվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 10320000 (տասը միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք պայմանագրի վճարման ժամանակացույցով: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՔԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրից կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է Երևան քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410032
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան

(ստորագրություն)
Կ.Տ.



Կ ա տ ա ր ո ղ

«ԱՐԽԻ ԹՈՒՆ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ոստան,
Երևանյան 13
«ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150015516686660
ՀՎՀՀ 04234306

Է. Խաչատրյան

(ստորագրություն)



14

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի հ.11 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման նախագծանախաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների

Ձ/Հ	գնումների պանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ձ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	71241200/195	<p>1. Նախատեսել:</p> <ul style="list-style-type: none"> - Ճաշարանի պատերի և հատակների վերանորոգում՝ խեցեսալերով և կերամիկական սալերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ, - Թեք տանիքի նորոգում, - Օդափոխության համակարգի ստուգում և անհրաժեշտության դեպքում՝ փոխում, - Տաք ջրամատակարարման ապահովում, - Լվացարանների փոխարինում նորով, - Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեսալերի և կերամիկական սալերի, - զուգարանակոնքերի և վացարանների փոխարինման աշխատանքներ, - Ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով, - Աստիճանավանդակների պրեսգրանիտով, մետաղական բազրիքների փոխում այլումինեով, - Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ծեփամածկում, ներկում լատեքսային ներկով, - Դռների և լուսամուտների փոխում նորով (պատուհանագոգերով), - Արտաքին մետաղական արցունքաթափի տեղադրում, 	1272000	1272000	1	Բուսթավելու հ.19	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ	

		<ul style="list-style-type: none"> - Կինիէ, լամինատե, պրեսզրանիտե հատակի իրականացում, - Արտաքին պատերի, նկուղի առաստաղի, տանիքի ջերմամեկուսացում, - Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով Էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր: - Ուսումնասիրել նաև ջեռուցման համակարգը, անհրաժեշտության դեպքում՝ նախատեսել վերանորոգում կամ էլեմենտների փոխում, - Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: - Բակերի բարեկարգում - Ցանկապատի կառուցում փոքր դռնակների հետ միասին, ներկում, էսբիզի համաձայնեցում Պատվիրատուի հետ, - Դարպասների կառուցում, - ՆՈՒՀ-ի շուրջ սավաճքների իրականացում, - Նկուղային մասի բարեկարգում, - Մնախողի ավելացում սիզամարգերում, սերմի ցանք, - Արտաքին ջրամատակարարման, կոյուղու և այլ կոմունիկացիաների դիտահորերի նիշերի ուղղում ըստ տեղանքի և անհրաժեշտության դեպքում նորի կառուցում, - Տարածքի ամֆալտապատում (անձրևաջրերի և այլ մակերեսային ջրերի ուղղորդված ջրահեռացում): - Անհրաժեշտության դեպքում նոր պրահետների կառուցում, - Խաղահրապարակների կառուցում, անհրաժեշտության դեպքում խաղերի տեղադրում, տարածքների բարեկարգում, գծանշում, - Նստարանների կառուցում կամ պատրաստի նստարանների տեղադրում, - Աղբամանների կառուցում կամ տեղադրում, 				
--	--	--	--	--	--	--

		<ul style="list-style-type: none"> - ՆՈՒՀ-ի ճակատների վացում, նորոգում, ներկում, - Տնկիների տեղադրում, - Ոռոգման համակարգի կառուցում, - Գետոբեգիական հանույթի իրականացում, - Նախագծի մեջ ներառել բոլոր այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ՆՈՒՀ-ի տարածքը լիարժեք բարեկարգ տեսքի բերելու համար, - Բարեկարգման էքզիզային տարբերակը համաձայնեցնել պատվիրատուի հետ: - Կատարողը պարտավոր է ձեռք բերել բոլոր անհրաժեշտ տեխնիկական պայմանները: 2. Ներկայացնել մանրամասնորեն կատարած ուսումնասիրությունների արդյունում հիմնավորված աշխատանքային ծավալներ: 3. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: 4. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից, նախահաշիվը՝ 3, նաև էլ. տարբերակով: 5. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները: 6. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: 7. Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնել նաև ռուսերեն լեզվով: 8. Աշխատանքների վճարումը կիրականացվի դրական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո: 					
--	--	--	--	--	--	--	--

Երևան քաղաքի Կենտրոն շրջանի հ.14 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման նախագծանախահաշիվային փաստաթղթերի կազմման աշխատանքների

Չ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	<table border="1"> <tr> <td align="center" colspan="2">կատարմաՇ</td> </tr> <tr> <td align="center">հասցեն</td> <td align="center">ժամկետը</td> </tr> </table>	կատարմաՇ		հասցեն	ժամկետը
կատարմաՇ											
հասցեն	ժամկետը										

2	71241200/196	<p>1. Նախատեսել:</p> <ul style="list-style-type: none"> - Ճաշարանի պատերի և հատակների վերանորոգում՝ խեցեալերով և կերամիկական սալերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ, - Օդափոխության համակարգի ստուգում և անհրաժեշտության դեպքում՝ փոխում, - Տաք ջրամատակարարման ապահովում, Լվացարանների փոխարինում նորով, Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեալերի և կերամիկական սալերի, գուգարանակոնքերի և վազարանների փոխարինման աշխատանքներ, - Զրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով, - Աստիճանավանդակների նորոգում, երեսապատում պրեսզրանիտով, մետաղական բազիթների փոխում ալյումինեով, - Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ծեփամածկում, ներկում լատեքսային ներկով, - Դռների և լուսանոսների փոխում նորով (պատուհանագոգերով), - Արտաքին մետաղական արցունքաթափի տեղադրում, - Վինիլե, լամինատե, պրեսզրանիտե հատակի իրականացում, - Արտաքին պատերի, նկուղի առաստաղի, տանիքի ջեմամեկուսացում, - Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր: - Ուսումնասիրել տանիքների վիճակը, անհրաժեշտության դեպքում՝ նախատեսել վերանորոգում, - Ուսումնասիրել նաև ջեռուցման համակարգը, անհրաժեշտության դեպքում՝ նախատեսել վերանորոգում կամ էլեմենտների փոխում. 	1188000	1188000	1	Այսպիսի	<p>Պ այնանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ</p>
---	--------------	---	---------	---------	---	---------	---

				<ul style="list-style-type: none"> - Շին. աղբի մաքրում, հավաքում, բարձրում ավտոմեքանաթափ և տեղափոխում թափոնատեղ: - Բակերի բարեկարգում - Ցանկապատի կառուցում փոքր դրնակների հետ միասին, ներկում, էքիզի համաձայնեցում Պատվիրատուի հետ, - Դարպասների կառուցում, - ՆՈՒՀ-ի շուրջ սավաճքների իրականացում, - Եկուղային մասի բարեկարգում, - Սևահողի ավելացում սիզամարգերում, սերմի ցանք, - Արտաքին ջրամատակարարման, կոյուղու և այլ կոմունիկացիաների դիտահորերի նիշերի ուղղում ըստ տեղանքի և անհրաժեշտության դեպքում նորի կառուցում, - Տարածքի ասֆալտապատում (անձրևաջրերի և այլ մակերեսային ջրերի ուղղորդված ջրահեռացում): - Անհրաժեշտության դեպքում նոր արահետների կառուցում, - Խաղահրապարակների կառուցում, անհրաժեշտության դեպքում խաղերի տեղադրում, տարածքների բարեկարգում, գծանշում, - Նստարանների կառուցում կամ պատրաստի նստարանների տեղադրում, - Աղբամանների կառուցում կամ տեղադրում, - ՆՈՒՀ-ի ճակատների վացում, նորոգում, ներկում, - Տնկիների տեղադրում, - Ոռոգման համակարգի կառուցում, - Գեոդեզիական հանույթի իրականացում, - Նախագծի մեջ ներառել բոլոր այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ՆՈՒՀ-ի տարածքը լիարժեք բարեկարգ տեսքի բերելու համար, - Բարեկարգման էքիզային տարբերակը համաձայնեցնել պատվիրատուի հետ:
--	--	--	--	--

		<ul style="list-style-type: none"> - փոխարինման աշխատանքներ, Զրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով: - Հին դռների և լուսամուտների (լուսամուտագրգերով) փոխարինում մետաղապլաստով, լուսամուտների արտաքին շեպերի ց/ավագե սկալ և արցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղով, - Նախատեսել ջերմային կամար լուսամուտներին, - Աստիճանավանդակների նորոգում, երեսապատում պրեսգրանիտով, մետաղական բազրիքների փոխում այլմիջուկով, - Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ձեփամածկում, ներկում և տեքստային ներկով, - Հին մանրահատակի նորոգում և նորի իրականացում, անհրաժեշտության դեպքում վինիլե, լամինատե, պրեսգրանիտե հատակի իրականացում, - Արտաքին պատերի, նկուղի առաստաղի, տանիքի ջերմամեկուսացում, - Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր: - Ուսումնասիրել նաև ջեռուցման համակարգը, անհրաժեշտության դեպքում նախատեսել վերանորոգում կամ էլեմենտների փոխում, - Շին.արգի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: - Բակերի բարեկարգում - Ցանկապատի կառուցում փոքր դռնակների հետ միասին, ներկում, էպքիզի համաձայնեցում Պատվիրատուի հետ, - Դարպասների կառուցում, - ՆՈՒՀ-ի շուրջ սավաճքների իրականացում, Սևահողի ավելացում սիզամաղձերում, սերմի ցանք, - Տարածքի ջրամատակարարման, կոյուղու և այլ կոմունիկացիաների դիտահորերի 				<p>օրվանից 70-րդ օրացուցային օրը ներառյալ</p>
--	--	--	--	--	--	---

	<p>կիշերի ուղղում ըստ տեղանքի և անհրաժեշտության դեպքում նորի կառուցում,</p> <ul style="list-style-type: none"> - Տարածքի ասֆալտապատում (անձրևաջրերի և այլ մակերեսային ջրերի ուղղորդված ջրահեռացում): - Անհրաժեշտության դեպքում նոր արահետների կառուցում, - Խաղաղարապարակների կառուցում, անհրաժեշտության դեպքում խաղերի տեղադրում, տարածքների բարեկարգում, գծանշում, - Նստարանների կառուցում կամ պատրաստի նստարանների տեղադրում, - Աղբամանների կառուցում կամ տեղադրում, - Տարածքի լուսավորության իրականացում, - ՆՈՒՀ-ի ճակատների վերացում, նորոգում, ներկում, - Տնկիների տեղադրում, - Ոռոգման համակարգի կառուցում, - Գեոդեզիական հանույթի իրականացում, - Նախագծի մեջ ներառել բոլոր այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ՆՈՒՀ-ի տարածքը լիարժեք բարեկարգ տեսքի բերելու համար, - Բարեկարգման էքզիզային տարբերակը համաձայնեցնել պատվիրատուի հետ: - Կատարողը պարտավոր է ձեռք բերել բոլոր անհրաժեշտ տեխնիկական պայմանները: <p>2. Ներկայացնել մանրամասնորեն կատարած ուսումնասիրությունների արդյունում հիմնավորված աշխատանքային ծավալներ:</p> <p>3. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:</p> <p>4. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից, նախահաշիվ՝ 3, նաև էլ տարբերակով:</p> <p>5. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները:</p> <p>6. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող միջնագիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները:</p>
--	--

		<p>պատերի և առաստաղների սկզբի վերանորոգում, ձեփամածկում, ներկում լատեքսային ներկով,</p> <ul style="list-style-type: none"> - Հին մանրահատակի նորոգում և նորի իրականացում, անհրաժեշտության դեպքում վնիփե, լամինատե, պրեսգրանիտե հատակի իրականացում, - Ուսումնասիրել դռների և լուսամուտների վիճակը, անհրաժեշտության դեպքում նախատեսել փոխարինում կամ վերանորոգում, - Արտաքին պատերի, նկուղի առաստաղի, տանիքի ջերմամեկուսացում, - էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով էներգախնայող ԼԵՄ տիպի լամպեր: - Ուսումնասիրել նաև ջեռուցման համակարգը, անհրաժեշտության դեպքում՝ նախատեսել վերանորոգում կամ էլեմենտների փոխում, - Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձրում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: - Բակերի բարեկարգում - Ցանկապատի կառուցում փոքր դռնակների հետ միասին, ներկում, էքիզի համաձայնեցում Պատվիրատուի հետ, - Դարպասների կառուցում, - ՆՈՒՀ-ի շուրջ սավաճքների իրականացում, - Սևահողի ավելացում սիզանարգերում, սերմի ցանք, - Տարածքի ջրամատակարարման, կոյուղու և այլ կոմունիկացիաների դիտահորերի նիշերի ուղղում ըստ տեղանքի և անհրաժեշտության դեպքում նորի կառուցում, - Տարածքի ասֆալտապատում (անձրևաջրերի և այլ նակերեսային ջրերի ուղղորդված ջրահեռացում): - Անհրաժեշտության դեպքում նոր արահետների կառուցում, - Խաղահրապարակների կառուցում, անհրաժեշտության դեպքում խաղերի տեղադրում, տարածքների բարեկարգում, զճանշում, 				
--	--	--	--	--	--	--

	<ul style="list-style-type: none"> - Նստարանների կառուցում կամ պատրաստի նստարանների տեղադրում, կամ - Աղբամանների կառուցում կամ տեղադրում, - Տարածքի լուսավորության իրականացում, - ՆՌԻՀ-ի ճակատների վացում, նորոգում, ներկում, - Տնկիների տեղադրում, - Ոռոգման համակարգի կառուցում, - Գեոդեզիական հանույթի իրականացում, - Տախագծի մեջ ներառել բոլոր այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ՆՌԻՀ-ի տարածքը լիարժեք բարեկարգ տեսքի բերելու համար, - Բարեկարգման էսքիզային տարբերակը համաձայնեցնել պատվիրատուի հետ: - Կատարողը պարտավոր է ձեռք բերել բոլոր անհրաժեշտ տեխնիկական պայմանները: <p>2. Ներկայացնել մանրամասնորեն կատարած ուսումնասիրությունների արդյունում հիմնավորված աշխատանքային ծավալներ:</p> <p>3. Տախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:</p> <p>4. Տախագիծը ներկայացնել 7 օրինակից, նախահաշիվ՝ 3, նաև էլ տարբերակով:</p> <p>5. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները:</p> <p>6. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող միջնագիտյին, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները:</p> <p>7. Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնել նաև ռոստերն լեգվով:</p> <p>8. Աշխատանքների վճարումը կիրականացվի դրական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո:</p>
--	--

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի հ.107 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների

Ձ/Կ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ձ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
5	71241200/199	<p>1. Նախատեսել:</p> <ul style="list-style-type: none"> - Ճաշարանի պատերի և հատակների վերանորոգում՝ խեցեսալերով և կերամիկական սալերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ, Թեք տանիքի վերանորոգում; - Օդափոխության համակարգի ստուգում և անհրաժեշտության դեպքում՝ փոխում; - Լվացարանների փոխարինում նորով; - Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեսալերի և կերամիկական սալերի, զուգարանակոնքերի և վկացարանների փոխարինման աշխատանքներ, - Ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով; - Հին դռների և լուսամուտների (լուսամուտագոգերով) փոխարինում մետաղապլաստով, լուսամուտների արտաքին շեփերի ց/ավազե սվաղ և արցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղով, - Նախատեսել ջերմային կամար լուսամուտներին, - Աստիճանավանդակների նորոգում, երեսապատում պրեսգրանիտով, մետաղական բազդիքների փոխում այրումինեով, - Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ձեկհամաձկում, ներկում լատեքսային ներկով, - Հին մանրահատակի նորոգում և նորի իրականացում, անհրաժեշտության դեպքում վինիլե, լամինատե, պրեսգրանիտե հատակի իրականացում, 	դրամ	1 548 000	1 548 000	1	4-րդ զանգվ., Բակունցի 4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ

		<ul style="list-style-type: none"> - Արտաքին պատերի, նկուղի առաստաղի, տանիքի ջերմամեկուսացում, - Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով Էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր: - Ուսումնասիրել նաև ջեռուցման համակարգ, անհրաժեշտության դեպքում՝ նախատեսել վերանորոգում կամ էլեմենտների փոխում, - Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձրում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: - Բակերի բարեկարգում - Ցանկապատի կառուցում փոքր դռնակների հետ միասին, ներկում, էպիզի համաձայնեցում Պատվիրատուի հետ, - Դարպասների կառուցում, - ՆՈՒՀ-ի շուրջ սալվածքների իրականացում, - Սևահողի ավելացում սիզամարգերում, սերմի ցանք. - Տարածքի ջրամատակարարման, կոյուղու և այլ կոմունիկացիաների դիտահորերի նիշերի ուղղում ըստ տեղանքի և անհրաժեշտության դեպքում նորի կառուցում. - Տարածքի ասֆալտապատում (անձրևաջրերի և այլ մակերեսային ջրերի ուղղորդված ջրահեռացում): - Անհրաժեշտության դեպքում նոր արահետների կառուցում, հաղաիրապարակների կառուցում, անհրաժեշտության դեպքում խաղերի տեղադրում, տարածքների բարեկարգում, գծանշում, - Նստարանների կառուցում կամ պատրաստի նստարանների տեղադրում, Աղբամանների կառուցում կամ տեղադրում, - Տարածքի լուսավորության իրականացում, - ՆՈՒՀ-ի ճակատների լվացում, նորոգում, ներկում, - Տնկիների տեղադրում, - Ոռոգման համակարգի կառուցում, - Գեոթեխական հանույթի իրականացում, - Նախագծի մեջ ներառել բոլոր այն
--	--	--

		<p>աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ՆՈՒՀ-ի տարածքը լիարժեք բարեկարգ տեսքի բերելու համար,</p> <ul style="list-style-type: none"> - Բարեկարգման էքզիզային տարբերակը համաձայնեցնել պատվիրատուի հետ: - Կատարողը պարտավոր է ձեռք բերել բոլոր անհրաժեշտ տեխնիկական պայմանները: <p>2. Ներկայացնել մանրամասնորեն կատարած ուսումնասիրությունների արդյունում հիմնավորված աշխատանքային ծավալներ:</p> <p>3. Տախազիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:</p> <p>4. Տախազիծը ներկայացնել 7 օրինակից, նախահաշիվ՝ 3, նաև էլ տարբերակով:</p> <p>5. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները:</p> <p>6. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները:</p> <p>7. Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնել նաև ռուտերեն լեզվով:</p> <p>8. Աշխատանքների վճարումը կիրականացվի դրական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո:</p>					
--	--	--	--	--	--	--	--

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ.127 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման նախագծանախահաշիվային փաստաթղթերի կազմման աշխատանքների

Չ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման հասցեն	ժամկետը
-----	---	-----------------------	-----	-------------	----------------	------------------	--------------------	---------

71241200/200

1. Նախատեսել.
1. Նախատեսել.
- Ճաշարանի պատերի և հատակների վերանորոգում՝ խեցեալերով և կերամիկական սալերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ, Օդափոխության համակարգի ստուգում և անհրաժեշտության դեպքում՝ փոխում;
 - Լվացարանների փոխարինում նորով;
 - Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեալերի և կերամիկական սալերի, գուգարանակոնքերի և վլացարանների փոխարինման աշխատանքներ,
 - Ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով;
 - Հին դռների և լուսանոսների (լուսամուտագոգերով) փոխարինում մետաղապլաստով, լուսանոսների պրտաքին շեպերի ց/ավագե սվաղ և պրցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղով,
 - Աստիճանավանդակների նորոգում, երեսապատում պրեսգրանիտով, մետաղական բազրիքների փոխում այլմիներով,
 - Ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների սվաղի վերանորոգում, ծեփամածկում, ներկում լատեքսային ներկով,
 - Վինիլե, լամինատե, պրեսգրանիտե հատակների հրականացում,
 - Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր, լարերի և էլեկտրական սարքերի փոխում:
 - Թեք տանիքի հիմնանորոգում,
 - Արտաքին պատերի, նկուղի առաստաղի ջերմամեկուսացում,
 - Ուսումնասիրել նաև ջերմացման համակարգը, անհրաժեշտության դեպքում՝ նախատեսել վերանորոգում կամ էլեմենտների փոխում,
 - Շին.տղթի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ:

դրամ

1 032 000

1 032 000

1

Չեխովի փող. 14

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ

<ul style="list-style-type: none"> - Բակերի բարեկարգում - Ցանկապատի կառուցում փոքր դռնակների հետ միասին, ներկում, էսբիզի համաձայնեցում Պատվիրատուի հետ, - Դարպասների կառուցում, - ՆՈՒՀ-ի շուրջ սավաճքների իրականացում, - Սևահողի ավելացում սիզամարգերում, սերսի ցանք, - Տարածքի ջրամատակարարման, կոյուղու և այլ կոմունիկացիաների դիտահորերի նիշերի ուղղում ըստ տեղանքի և անհրաժեշտության դեպքում նորի կառուցում, - Տարածքի ասֆալտապատում (անձրևաջրերի և այլ մակերեսային ջրերի ուղղորդված ջրահեռացում): - Անհրաժեշտության դեպքում նոր արահետների կառուցում, - Խաղախրապարակների կառուցում, անհրաժեշտության դեպքում խաղերի տեղադրում, տարածքների բարեկարգում, գծանշում, - Նստարանների կառուցում կամ պատրաստի նստարանների տեղադրում, - Աղբամանների կառուցում կամ տեղադրում, - ՆՈՒՀ-ի ճակատների լվացում, նորոգում, ներկում, - Տնկիների տեղադրում, - Ոռոգման համակարգի կառուցում, - Գեոդեզիական հանույթի իրականացում, - Նախագծի մեջ ներառել բոլոր այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ՆՈՒՀ-ի տարածքը լիարժեք բարեկարգ տեսքի բերելու համար, - Բարեկարգման էսբիզային տարբերակը համաձայնեցնել պատվիրատուի հետ: - Կատարողը պարտավոր է ձեռք բերել բոլոր անհրաժեշտ տեխնիկական պայմանները: 	<ol style="list-style-type: none"> 2. Ներկայացնել մանրամասնորեն կատարած ուսումնասիրությունների արդյունում հիմնավորված աշխատանքային ծավալներ: 3. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: 4. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից, նախահաշիվը՝ 3, նաև էլ. տարբերակով: 						

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Կատարված աշխատանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

PAYMENT ORDER RECEIPT

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Արտաշատ» Ա/Վ ID 899
"ARMBUSINESSBANK" CJSC "Artashat" branch Ամսաթիվ/Date 13/08/20 11:36

Դեբիտ/Debit 1150015516686660	Կրեդիտ/Credit 900015211429	Գումար/Amount AMD 1,036,000.00
---------------------------------	-------------------------------	-----------------------------------

Վճարող/Remitter
ԱՐԽԻ ԹՈՒԼՍ ՍՊԸ
ARCHI TOOLS LLC
Վճարողի բանկ/Remitter's Bank
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ARMBUSINESSBANK CJSC
Վճարողի ԶՎՀՀ/Remitter's Tax Code 9904234306

Ըստացուցիչ/Beneficiary
Մուսթեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային
պարտավորությունների կատարման դիմաց գանձվող տույժերից
Ըստացուցիչի բանկ/Beneficiary's Bank
Երևանի թիվ 1 ՑԳԲ

Գումարը բառերով/Amount in Words
Մեկ միլիոն երեսուներեց հազար դրամ
Նպատակ/Details
ԵԲ-ԳՅՈՍՇԸԲ-20/7 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԱՐԽԻ ԹՈՒԼՍ ՍՊԸ ԶՎՀՀ
04234306

Կատարող/Maker Ըուշաննա Գավթյան
Ս.Տ.
Տ.Տ.

«ՀԱՅԲԱԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Արտաշատ» Ս/Հ
"ARMBUSINESSBANK" CJSC "Artashat" branch
ՊԿ\ID 899

Վերբեռ\Debit 1150015516686660
Կրեդիտ\Credit 900015211429
Ամսաթիվ\Date 13/08/20 11:34
Գումար\Amount AMD 10,360,000.00

Վճարող\Remitter
ԱՐԽԻ ԹՈՒՆԸ ՍՊԸ
ARCHI TOOLS LLC
Վճարողի բանկ\Remitter's Bank
«ՀԱՅԲԱԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ARMBUSINESSBANK CJSC
Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9904234306



Ըստացող\Beneficiary
Մուսաբեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային
պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից
Ըստացողի բանկ\Beneficiary's Bank
Երևանի թիվ 1 ՏԳԲ

Գումարը բառերով\Amount in Words
Տասը միլիոն երեք հարյուր վաթսուև հազար դրամ
Նպատակ\Details
ԵՔ-ԳՀՄԱՇԸԲ-20/7 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՐԱԿՎՈՐԱՄԱՍ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԱՐԽԻ-ԹՈՒՆԸ ՍՊԸ
ՀՎՀՀ04234306

Նաղարող\Maker Լուշաննա Դավթյան

Ս.Տ.
ՏՏ.